

Օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիա) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկա

Սույն մեթոդիկան տարածվում է էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության և ջերմային էներգիայի բաշխման իրավունք ունեցող լիցենզավորված այն անձանց վրա (այսուհետ՝ ընկերություն), որոնց էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (այսուհետ՝ համակցված արտադրություն) տեղակայանքների արտադրական հզորությունները ընտրված են սպասարկվող տարածքում ջերմամատակարարման (ջեռուցում և տաք ջրամատակարարում) օգտակար պահանջարկի ապահովման պայմաններից ելնելով, և որոնց համակցված արտադրության տեղակայանքները սույն մեթոդիկայի համաձայն համարվում են բարձր արդյունավետության տեղակայանքներ:

1. Համակցված արտադրության տեղակայանքների արդյունավետության որոշում

1.1 Բարձր արդյունավետության են համարվում համակցված արտադրության՝

- 1) այն տեղակայանքները, որոնք ջերմային և էլեկտրական էներգիայի անջատ արտադրության համեմատությամբ ապահովում են առաջնային էներգիայի (վառելիքի) առնվազն 10% խնայողություն,
- 2) փոքր (մինչև 1 էլեկտրական ՄՎտ) կամ միկրո (մինչև 150 էլեկտրական կՎտ) տեղակայանքները, որոնք անկախ առաջնային էներգիայի խնայողության մակարդակից, որակավորվում են որպես բարձր արդյունավետության տեղակայանք:

1.2 էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության էներգախնայողության ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱԷԽ = \left[1 - \frac{1}{\frac{h_{\text{ազ}}}{h_{\text{ուզ}}} + \frac{h_{\text{աբ}}}{h_{\text{ուբ}}}} \right] \times 100\% ,$$

որտեղ՝

ԱԷԽ - առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշն է (%),

$h_{\text{ազ}}$ - ջերմային էներգիայի համակցված արտադրության արդյունավետությունն է (կամ բացարձակ ջերմային ՕԳԳ-ն), որը որոշվում է որպես օգտակար ջերմային էներգիայի տարեկան արտադրանքի և ջերմային ու էլեկտրական էներգիայի արտադրության համար տարվա ընթացքում ծախսված առաջնային վառելիքի էներգիայի հարաբերություն,

$h_{\text{ուզ}}$ – ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքն է ,

$h_{\text{աբ}}$ - էլեկտրաէներգիայի համակցված արտադրության արդյունավետությունն է (կամ բացարձակ էլեկտրական ՕԳԳ-ն), որը որոշվում է որպես էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանքի և ջերմային ու էլեկտրական էներգիայի արտադրության համար տարվա ընթացքում ծախսված առաջնային վառելիքի էներգիայի հարաբերություն:

$h_{\text{է}}$ - էլեկտրական էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքն է:

1.3 էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության արդյունավետության ցուցանիշներն ընդունվում են համակցված արտադրության տեղակայանքներում օգտագործվող սարքավորումների բնութագրերի հիման վրա, հաշվի առնելով տեղական բնակլիմայական և սարքավորումների շահագործման պայմանները:

1.4 էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից և վերանայվում են յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ:

1.5 Համակցված ցիկլով արտադրված օգտակար ջերմային էներգիայի տարեկան քանակությունը հաշվարկվում է մայրուղային ջերմային ցանցի մուտքի

վրա և չի ներառում գազաթնային ջրատաքացուցիչ կաթսաների կողմից արտադրված ջերմային էներգիան:

2. Սակագնային համակարգի մշակման սկզբունքները

2.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բազմաբնակարանային շենքերի կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնումը տեղի է ունենում անհատական ջերմամատակարարման տարբեր լուծումների հետ մրցակցության պայմաններում, կենտրոնացված ջերմամատակարարման սակագները պետք է լինեն մրցունակ: Համակցված արտադրության առանձնահատկությունները և բարձր արդյունավետությունը թույլ են տալիս սահմանել ջերմամատակարարման այնպիսի սակագներ, որոնք հաշվի կառնեն վճարունակ պահանջարկը և կապահովեն այդ ծառայությունների ոլորտում բնակչության առավելագույն ընդգրկում:

2.2 Սակագնային համակարգի մշակման առաջին փուլում որոշվում են ջեռուցման և տաք ջրամատակարարման այնպիսի հաշվարկային սակագներ, որոնք, հաշվի առնելով սույն մեթոդիկայի 2.1 կետում նշված սկզբունքները, կապահովեն առավելագույն հասույթ ջերմամատակարարումից: Այդ սակագները որոշվում են շուկայի ուսումնասիրությունների և գոյություն ունեցող ջերմամատակարարման համակարգերի փորձի հիման վրա:

2.3 Հիմք ընդունելով սույն մեթոդիկայի 2.1 կետում նշված սկզբունքներով որոշված ջերմամատակարարման ծառայությունների հաշվարկային սակագները, սույն մեթոդիկայի 3-րդ գլխի համաձայն հաշվարկվում են էլեկտրաէներգիայի այնպիսի սակագներ, որոնք ընկերությանը թույլ կտան էլեկտրական և ջերմային էներգիայի իրացումից ստանալ բավարար հասույթ՝ շահագործման և պահպանման հիմնավորված ծախսերի իրականացման և ներգրավված կապիտալի ողջամիտ շահութաբերություն ապահովելու համար: Այդ սակագները չպետք է գերազանցեն Հանձնաժողովի կողմից սահմանված առավելագույն թույլատրելի մեծությունը:

2.4 Սույն մեթոդիկայի 2.3 կետում նշված սկզբունքներով հաշվարկված էլեկտրական էներգիայի սակագնով գնման է ենթակա միայն տվյալ ժամանակահատվածում ջերմային օգտակար պահանջարկի հիման վրա համակցված եղանակով արտադրված և առաքված էլեկտրաէներգիան (W_h), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_h = k \cdot Q_h,$$

որտեղ՝

Q_h - տվյալ ժամանակահատվածում սույն մեթոդիկայի 1.5 կետի համաձայն հաշվարկված օգտակար ջերմային էներգիան է,

k - համակցված արտադրության գործակիցն է, որն իրենից ներկայացնում է օգտակար ջերմային էներգիայի առաքման հիման վրա էլեկտրական էներգիայի տեսակարար արտադրությունը: Այն կախված է կիրառվող տեխնոլոգիական սարքավորումների տեսակից, տեղակայման վայրի բնակլիմայական ու սարքավորումների շահագործման պայմաններից և սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

2.5 Եթե տվյալ ժամանակահատվածում առաքված էլեկտրական էներգիան (W_w) գերազանցում է սույն մեթոդիկայի 2.3 կետի համաձայն հաշվարկված (W_h) մեծությանը, ապա $W_y = (W_w - W_h)$ տարբերությունը պայմանականորեն համարվում է «կոնդենսացիոն» ցիկլով արտադրված էլեկտրական էներգիա և կարող է գնվել տվյալ տարում էլեկտրական էներգիայի տարեկան հաշվեկշիռը փակող **ջերմաէլեկտրակայանի** երկդրույք սակագնի էլեկտրական էներգիայի (դրամ/կՎտժ) դրույքով, որը չի կարող գերազանցել համակցված արտադրության համար հաշվարկված սակագինը:

2.6 Ընկերությունների կողմից արտադրության լիցենզիա ստանալու օրվանից 5 տարի ժամանակահատվածը համարվում է ջերմամատակարարման վերականգման ժամանակահատված, որի ընթացքում ընկերությունների կողմից առաքված ամբողջ էլեկտրական էներգիան (W_w) գնվում է համակցված եղանակով արտադրված էլեկտրաէներգիայի սակագնով:

3. Էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկ

3.1 Համակցված եղանակով արտադրված և ցանց առաքված էլեկտրական էներգիայի սակագինը որոշվում է դրամական հոսքերի բերված (դիսկոնտավորված) արժեքների հիման վրա իրականացված ֆինանսատնտեսական հաշվարկների միջոցով.

$$UPU = \sum_{i=1}^n \frac{7R_i}{(1+r)^i} - \sum_{i=0}^m \frac{4B_i}{(1+r)^i} = 0,$$

որտեղ՝

Դ_ἰ - ընկերության հիմնական գործունեությունից i-րդ տարում առաջացող դրամական հոսքն է՝ առանց տվյալ տարում իրականացվող կապիտալ ներդրումների,

Կ_ἰ - i-րդ տարում իրականացվող կապիտալ ներդրումներն են,

n - հաշվարկային ժամանակահատվածն է տարիներով, որն ընդունված է հիմնական սարքավորումների ծառայության ժամկետին հավասար,

m - կապիտալ ներդրումների իրականացման տարիների թիվն է,

r - դիսկոնտի (գեղչի) դրույքաչափն է, որն իրականացվող նախագծի համար ընդունված է Հանձնաժողովի կողմից թույլատրված շահույթի ներքին նորմային հավասար (ՇՆՆ, IRR) ներգրավված ամբողջ (սեփական և փոխառու) կապիտալի նկատմամբ,

ՄԲԱ - դրամական հոսքերի մաքուր բերված (ներկա) արժեքն է (NPV):

3.2 Սույն մեթոդիկայի 3.1 կետում սահմանված բանաձևում անհայտ մեծությունն է հանդիսանում համակցված ցիկլով արտադրված էլեկտրական էներգիայի սակագինը, որն ընտրվում է այն հաշվով, որ թույլատրված դիսկոնտի դրույքաչափի պայմանում ապահովվի ՄԲԱ = 0 պայմանը, ինչը և նշանակում է, որ ապահովվում է թույլատրելի շահույթի ներքին նորման:

3.3 Էլեկտրաէներգիայի և ջերմամատակարարման ծառայությունների վաճառքից ձևավորված տարեկան դրամական հոսքերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով,

$$ԴՀ = (Հ_Է + Հ_Ջ) - (ՇՊԾ + Վառ + Հար),$$

որտեղ՝

Հ_Է - էլեկտրաէներգիայի վաճառքից առաջացող ընկերության հասույթն է,

Հ_Ջ - ջերմամատակարարման ծառայությունների իրացումից առաջացող ընկերության հասույթն է,

ՇՊԾ - էլեկտրական էներգիայի արտադրության և ջերմամատակարարման իրականացման համար հիմնավորված տարեկան շահագործման և պահպանման ծախսերն են (առանց վառելիքային բաղադրիչի),

Վառ- տարվա ընթացքում էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության համար ծախսված վառելիքի արժեքն է,

Հար - ընկերության կողմից վճարվող հարկերն են (բացի ավելացված արժեքի հարկից):

3.4 Էլեկտրաէներգիայի իրացումից ստացվող հասույթը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_E = W_3 U_3 + W_4 U_4,$$

որտեղ՝

W_3 և W_4 - սույն մեթոդիկայի 2.4 և 2.5 կետերի համաձայն որոշված համակցված և “կոնդենսացիոն” եղանակներով արտադրված և առաքված էլեկտրատեներգիայի քանակություններն են (կՎտժ),

U_3 - համակցված եղանակով արտադրված և առաքված էլեկտրատեներգիայի սակագինն է (դր/կՎտժ), որը որոշվում է սույն մեթոդիկայի 3.1 կետի համաձայն,

U_4 – “կոնդենսացիոն” եղանակով արտադրված և առաքված էլեկտրական էներգիայի սակագինն է, որը որոշվում է սույն մեթոդիկայի 2.5 կետի համաձայն:

3.5 Ընկերությունների կողմից արտադրության լիցենզիա ստանալու օրվանից 5 տարվա ընթացքում էլեկտրատեներգիայի իրացումից ստացվող հասույթը կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$R_E = W_w U_3:$$

3.6 Ջերմամատակարարման ծառայությունների իրացումից ստացվող հասույթը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_{\Sigma} = Q_{\Sigma \text{ էն}} \bar{U}_{\Sigma \text{ էն}} + Q_{\Sigma \text{ Տ}} \bar{U}_{\Sigma \text{ Տ}},$$

որտեղ՝

$Q_{\Sigma \text{ էն}}$ - տարվա ընթացքում ջեռուցման համար սպառողներին (բաժանորդներին) իրացվող ջերմային էներգիայի քանակությունն է (կՎտ·ժ),

$\bar{U}_{\Sigma \text{ էն}}$ - ջեռուցման միջին հաշվարկային սակագինն է (դր/կՎտ·ժ),

$Q_{\Sigma \text{ Տ}}$ - տարվա ընթացքում տաք ջրամատակարարման համար սպառողներին իրացվող ջերմային էներգիայի քանակությունն է (կՎտ·ժ),

$\bar{U}_{\Sigma \text{ Տ}}$ - տաք ջրամատակարարման միջին հաշվարկային սակագինն է (դր/կՎտ·ժ):

3.7 Ջեռուցման և տաք ջրամատակարարման միջին հաշվարկային սակագներն իրենցից ներկայացնում են համապատասխան ծառայություններից ստացվող հասույթների և իրացված էներգիայի քանակությունների հարաբերություններ և որոշվում են՝ ելնելով սույն մեթոդիկայի 2.1 կետում նշված սկզբունքներից:

3.8 Շահագործման և պահպանման ծախսերը (այսուհետ՝ ՇՊԾ) ներառում են ընկերությունների ծախսերի հետևյալ խմբերը՝

- 1) անձնակազմի աշխատավարձը, այդ թվում՝ սոցիալական ապահովության հիմնադրամի վճարումները,
- 2) շահագործման համար անհրաժեշտ նյութերի ծախսերը,
- 3) տեխնոլոգիական գործընթացների ապահովման համար անհրաժեշտ գնովի էլեկտրատեներգիայի և ջրի արժեքը,
- 4) համակցված արտադրության և կաթսայական տեղակայանքների, արտաքին և ներշենքային ցանցերի նորոգման ծախսերը, որոնք ընդգրկում են ինչպես կապալառու կազմակերպությունների կողմից, այնպես էլ սեփական ուժերով իրականացվող նորոգման աշխատանքների արժեքը,
- 5) բաժանորդների սպասարկման ծախսերը, որոնք ընդգրկում են հաշվառման սարքերի սպասարկման, ցուցմունքներ վերցնելու, հաշիվներ ներկայացնելու, ծառայությունների վճարների հաշվառման և հավաքագրման ծախսերը,
- 6) վարչական և ընդհանուր բնույթի ծախսեր,
- 7) այլ գործառնական ծախսեր, որոնք կարող են ընգրկել նաև անհուսալի դեբիտորական պարտքերի թույլատրելի չափերը:

3.9 ՇՊԾ-ի մեջ չեն մտնում ներբնակարանային, իսկ այլ սպառողների համար նաև ներշենքային, ջերմամատակարարման համակարգերի նորոգման ծախսերը: Այդ ծախսերը իրականացվում են սպառողների հաշվին: ՇՊԾ-ի մեջ չեն մտնում նաև այն ծախսերը, որոնք կապված չեն էներգիայի արտադրության և ջերմամատակարարման հետ: Այդ ծախսերի համար ընկերությունը վարում է առանձին հաշվառում:

3.10 Վառելիքային ծախսերը (Վառ) ներառում են համակցված արտադրության ագրեգատներում և գազաթնային ջրատաքացուցիչ կաթսաներում էլեկտրական և ջերմային էներգիայի տարեկան հաշվարկային արտադրության համար օգտագործվող վառելիքի արժեքը, որը հաշվարկվում է բնական գազի գործող սակագնային համակարգի հիման վրա:

3.11 Ընկերությունների կողմից վճարվող հարկերը ընդգրկում են Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված բոլոր հարկերը, բացի ավելացված արժեքի հարկից, որը հաշվարկների ժամանակ հաշվի չի առնվում ոչ հասույթում, ոչ ծախսերում:

3.12 Դրամական հոսքերի հաշվարկում ներառվող կապիտալ ներդրումները (ԿՆ) ընդգրկում են Հանձնաժողովի կողմից անհրաժեշտ ճանաչված հետևյալ ծախսերը՝

- 1) համակցված արտադրության և կաթսայական տեղակայանքների կառուցման ու էլեկտրական, գազաբաշխիչ, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերին միացման ծախսերը,
- 2) ջերմային նոր մայրուղային և բաշխիչ ցանցերի կառուցման և (կամ) գոյություն ունեցող ցանցերի վերականգնման ծախսերը,
- 3) ներշենքային ցանցերի, այդ թվում ուղղաձիգ ջեռուցման ցանցերի՝ բնակարանների միջով անցնող կանգնակների վերականգնման կամ կառուցման ծախսերը,
- 4) բազմաբնակարանային բնակելի շենքերի շքանուտքերում նախագծով պահանջվող աշխատանքների արժեքը (լուսամուտների և դռների վերականգնում, անհրաժեշտության դեպքում ջեռուցման սարքերի տեղադրում),
- 5) հաշվառման համակարգի (ջերմային հաշվիչների, ալոկատորների, ջրաչափերի), այդ թվում բնակարաններում տեղաբաշխվող, արժեքը,
- 6) շահագործման և պահպանման համար անհրաժեշտ մեքենաների և սարքավորումներ ձեռք-բերման արժեքը,
- 7) վարչական, տնտեսական նշանակության շենքերի կառուցման կամ ձեռք-բերման արժեքը,
- 8) անհրաժեշտ չափերի շրջանառու կապիտալը:

3.13 Բնակիչ-բաժանորդների ներբնակարանային ջերմամատակարարման համակարգերի կառուցման համար պահանջվող ներդրումների ծավալը դրամական հոսքերի հաշվարկում չի ընդգրկվում: Այն հաշվարկվում է առանձին և կարող է իրականացվել ընկերության կամ բնակիչների միջոցների հաշվին:

3.14 Ընկերության կողմից ներբնակարանային համակարգերի կառուցման համար կատարված ներդրումները հատուցվում են սույն մեթոդիկայի 4-րդ գլխի համաձայն հաշվարկված սակագնային առանձին դրույքով, որը վճարվում է միայն այն բնակիչների կողմից, որոնց ներբնակարանային համակարգի կառուցումը ֆինանսավորվել է ընկերության կողմից:

3.15 Այլ սպառողների տարածքներում ջեռուցման և տաք ջրամատակարարման ցանցերը կառուցվում են բաժանորդների հաշվին:

4. Սակագների կառուցվածքի և սակագնային դրույքների հաշվարկ

4.1 Էլեկտրական էներգիայի համար սահմանվում է միադրույք (դր/կՎտ·ժ) սակագին, որի մեծությունը սահմանման պահին որոշվում է սույն մեթոդիկայի 2-րդ և 3-րդ գլուխների համաձայն: Հետագայում այդ սակագինը սահմանված ժամկետներում ենթակա է ճշգրտման սույն մեթոդիկայի 5-րդ գլխի համաձայն:

4.2 Ջեռուցման ծառայության համար սահմանվում է եռադրույք սակագին, որը բաղկացած է հետևյալ դրույքներից`

- 1) մեկ մ² ջեռուցվող տարածքի համար հաստատագրված ամսական վճար (դր/մ²/ամիս), որը հաշվի չի առնում ներբնակարանային ջեռուցման համակարգի ստեղծման ծախսերը (ՋՀԴ_ա),
- 2) մեկ կՎտ·ժ սպառված ջերմային էներգիայի (փոփոխական վճարի) դրույք (ՋՓԴ, դր/կՎտ ժ),
- 3) մեկ մ² ջեռուցվող տարածքի համար հաստատագրված ամսական վճար (ՋՀԴ_գ, դր/մ²/ամիս), որի միջոցով հատուցվում են ներբնակարանային ջեռուցման ցանցերի ստեղծման համար ընկերության կողմից կատարվող ներդրումները:

4.3 Սույն մեթոդիկայի 4.2 կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույքը (ՋՀԴ_գ) կիրառվում է այն դեպքում, երբ բնակիչ-բաժանորդի և ընկերության համաձայնությամբ ներբնակարանային համակարգը կառուցվում է ընկերության հաշվին և ենթադրում է նախագծերով նախատեսված ստանդարտ սարքերի և խողովակների օգտագործում:

4.4 Այն դեպքերում, երբ օգտագործվում է գոյություն ունեցող ներտնային համակարգը, կամ այդ համակարգը ստեղծվում է բնակչի կամ այլ միջոցների (ոչ ընկերության ներդրումների) հաշվին, սույն մեթոդիկայի 4.2 կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույքը չի գանձվում:

4.5 Բնակիչ-բաժանորդների տաք ջրամատակարարման համար սահմանվում է երկդրույք սակագին` բաղկացած հետևյալ դրույքներից`

- 1) բնակարանի մակերեսի մեկ մ² վերագրված հաստատագրված ամսական վճար (ՏՋՀԴ, դր/մ²/ամիս),
- 2) ծախսված ջերմային էներգիայի դրույք (ՏՋՀԴ), որի միավորը` կախված հաշվառման համակարգից և սկզբունքներից, կարող է հանդիսանալ կամ տաք ջրի քանակը (դր/մ³), կամ ջերմության քանակը (դր/կՎտ·ժ):

4.6 Այլ (հանրային) սպառողների տաք ջրամատակարարման համար սահմանվում է միադրույք դր/մ³ կամ դր/կՎտ ժ սակագին:

4.7 Ձեռուցումից և տաք ջրամատակարարումից ստացվող հասույթները ($R_{\text{Ձեռ}}$ և $R_{\text{ՏՁ}}$) հաշվարկվում են հետևյալ բանաձևերով՝

$$R_{\text{Ձեռ}} = Q_{\text{Ձեռ}} \cdot \bar{U}_{\text{Ձեռ}} \quad \text{և} \quad R_{\text{ՏՁ}} = Q_{\text{ՏՁ}} \cdot \bar{U}_{\text{ՏՁ}},$$

որտեղ՝

$Q_{\text{Ձեռ}}$ և $Q_{\text{ՏՁ}}$ - համապատասխանաբար ջեռուցման և տաք ջրամատակարարման համար սպառվող ջերմային էներգիայի քանակություններն են (կՎտ·ժ),

$\bar{U}_{\text{Ձեռ}}$ և $\bar{U}_{\text{ՏՁ}}$ - ջեռուցման և տաք ջրամատակարարման միջին հաշվարկային սակագներն են (դր/կՎտ·ժ)՝ որոշված սույն մեթոդիկայի 2.1 կետում նշված սկզբունքների համաձայն:

4.8 Ձեռուցման հաստատագրված ($\Delta R_{\text{Դ}_w}$) և փոփոխական ($\Delta \Phi_{\text{Դ}}$) սակագնային դրույքները հաշվարկելու համար ջեռուցումից ստացվող հասույթը ($R_{\text{Ձեռ}}$) բաժանվում է երկու մասի՝

- 1) հաստատագրված վճարումներով ստացվող հասույթ՝ $R_{\text{Ձեռ}}$,
- 2) փոփոխական վճարումներով ստացվող հասույթ՝ $\Phi_{\text{Ձեռ}}$:

4.9 Այս բաժանումն իրականացվում է այնպես, որ մի կողմից, փոփոխական հասույթը բավարար լինի ջեռուցման համար իրականացվող փոփոխական ծախսերի (վառելիքի, գնովի էլեկտրաէներգիայի, ջրի) կատարման համար, ճիշտ «ազդանշաններ» հաղորդվեն սպառողներին էներգախնայողություն իրականացնելու համար, իսկ մյուս կողմից՝ տարվա ընթացքում հնարավորինս հավասարաչափ բաշխվեն բնակչության ջեռուցման ծախսերը:

4.10 Ձեռուցումից ստացվող հասույթի բաշխումը հաստատուն և փոփոխական մասերի կատարվում է ընկերության կողմից՝ իր իսկ հայեցողությամբ:

4.11 Ձեռուցման հաստատագրված սակագնային դրույթը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta R_{\text{Դ}_w} = \frac{R_{\text{Ձեռ}}}{12 \times U_{\text{Ձեռ}}}, \quad (\text{դր/մ}^2/\text{ամիս}),$$

որտեղ՝

$U_{\text{Ձեռ}}$ - ընկերության կողմից ջեռուցվող ամբողջ տարածքի մակերեսն է:

4.12 Ձեռուցման համար սպառված մեկ կՎտ·ժ ջերմային էներգիայի սակագնային դրույթը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta\Phi\Gamma = \frac{\Phi\mathcal{R}_{\Delta\text{եռ}}}{Q_{\Delta\text{եռ}}}, \quad (\text{դր/կվտ}\cdot\text{ժ}),$$

որտեղ՝

$Q_{\Delta\text{եռ}}$ - ջեռուցման համակարգում տարեկան սպառվող ջերմային էներգիայի բանակությունն է կվտ·ժ - ուժ:

4.13 Ընկերության կողմից ներբնակարանային ջեռուցման համակարգերի կառուցումը ֆինանսավորելու դեպքում գանձվող լրացուցիչ հաստատագրված սակագնային դրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta\mathcal{R}\Gamma_{\sigma} = \mathcal{N}\mathcal{R}\mathcal{S}\mathcal{U} \cdot \frac{\left(1 + \frac{r}{12}\right)^{12n} \cdot \frac{r}{12}}{\left(1 + \frac{r}{12}\right)^{12n} - 1}, \quad (\text{դր/մ}^2/\text{ամիս}),$$

որտեղ՝

$\mathcal{N}\mathcal{R}\mathcal{S}\mathcal{U}$ - ներբնակարանային համակարգի կառուցման տեսակարար արժեքն է (դր/մ²),

n և r - սույն մեթոդիկայի 3.1 կետի համաձայն ֆինանսական հաշվարկներում օգտագործվող, համապատասխանաբար, հաշվարկային ժամկետն է՝ տարիներով և դիսկոնտի դրույքաչափն է՝ տոկոսներով:

4.14 Ներբնակարանային համակարգի կառուցման տեսակարար արժեքը որոշվում է որպես նախագծում նախատեսված ստանդարտ սարքավորումներով և խողովակներով սպասարկվող տարածքի բոլոր շենքերի ներբնակարանային համակարգերի կառուցման ընդհանուր նախահաշվային արժեքի ($\mathcal{N}\mathcal{R}\mathcal{U}$) և այդ շենքերի բոլոր բնակարանների ընդհանուր մակերեսի ($\mathcal{L}\mathcal{U}$) հարաբերություն՝

$$\mathcal{N}\mathcal{R}\mathcal{S}\mathcal{U} = \frac{\mathcal{N}\mathcal{R}\mathcal{U}}{\mathcal{L}\mathcal{U}}:$$

4.15 Բնակիչ-բաժանորդներին իրավունք է տրվում ցանկացած պահի մարել Ընկերության կողմից ֆինանսավորված ներբնակարանային համակարգի սակագնով չմարված գումարը և ազատվել սակագնային այդ դրույքով ($\Delta\mathcal{R}\Gamma_{\sigma}$) հետագա վճարումներից: Այդ դեպքում միանվագ վճարման ենթակա գումարը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՆՅՄԱ} = \left(\begin{array}{cc} \left(1 + \frac{r}{12}\right)^{(12n-m)} & -1 \\ \left(1 + \frac{r}{12}\right)^{(12n-m)} & \cdot \frac{r}{12} \end{array} \right) \times \text{ԲՄ},$$

որտեղ՝

ՆՅՄԱ - ներբնակարանային համակարգի չմարված (մնացորդային) արժեքն է,

m - ներբնակարանային համակարգի համար լրացուցիչ սակագնային դրույքով (ՋՅԴ_ճ) վճարումներ կատարված ամիսների քանակն է,

ԲՄ - բնակարանի մակերեսն է:

4.16. Ջեռուցման համար բնակիչ-բաժանորդի ամսական վճարը (ՋԱՎ) որոշվում է հետևյալ բանաձևերով՝

1) եթե ներբնակարանային համակարգի կառուցումը ֆինանսավորվել է ընկերության կողմից՝

$$\text{ՋԱՎ} = (\text{ՋՅԴ}_{\text{ա}} + \text{ՋՅԴ}_{\text{ճ}}) \times \text{ԲՄ} + \text{ՋՓԴ} \times \text{Q}_{\text{աճ}},$$

2) եթե ներբնակարանային համակարգի կառուցումը չի ֆինանսավորվել ընկերության կողմից, կամ եթե դրա մնացորդային արժեքը սույն մեթոդիկայի 4.15 կետի համաձայն մարվել է բնակիչ բաժանորդի կողմից՝

$$\text{ՋԱՎ} = \text{ՋՅԴ}_{\text{ա}} \times \text{ԲՄ} + \text{ՋՓԴ} \times \text{Q}_{\text{աճ}},$$

որտեղ՝

Q_{աճ} - հաշվարկային ամսվա ընթացքում ծախսված ջերմային էներգիայի քանակն է (կՎտ·ժ - ով):

4.17 Այլ սպառողների ամսական վճարը որոշվում է սույն մեթոդիկայի 4.16 կետի 2) ենթակետով սահմանված բանաձևով:

4.18 Սույն մեթոդիկայի 4.7 կետով սահմանված մեթոդի համաձայն հաշվարկված տաք ջրամատակարարման հասույթը (Յ_{ՏՋ}) ընկերության կողմից բաժանվում է երկու մասի՝

- 1) հաստատուն մաս (Յ_{ՏՋ}), որը գոյանում է հաստատագրված ամսական դրույքով վճարումների հաշվին,
- 2) փոփոխական մաս (ՓՅ_{ՏՋ}), որը գոյանում է ծախսված ջերմային էներգիայի դիմաց վճարումներից:

4.19 Բնակիչ-բաժանորդների տաք ջրամատակարարման հաստատուն ամսական դրույքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{\text{ՋՅԴ}} = \frac{R_{\text{ՏՁ}}}{12 \times \text{ԲՄ}},$$

որտեղ՝

ԲՄ - տաք ջրամատակարարում ունեցող բնակարանների ընդհանուր մակերեսն է:

4.20 Տաք ջրամատակարարման ծախսված էներգիայի դրույքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{\text{ՋՓԴ}} = \frac{\Phi_{\text{ՏՁ}}}{Q_{\text{ՏՁ}}} \text{ (դր/կՎտժ)} \quad \text{կամ} \quad S_{\text{ՋՓԴ}} = \frac{\Phi_{\text{ՏՁ}}}{V_{\text{ՏՁ}}} \text{ (դր/մ}^3\text{)}$$

որտեղ՝

$Q_{\text{ՏՁ}}$ - տաք ջրամատակարարման համար ծախսված ջերմության քանակն է կՎտ·ժ- ով,

$V_{\text{ՏՁ}}$ - տաք ջրամատակարարման համար օգտագործված տաք ջրի քանակն է մ³ - ով:

4.21 Միավորի ընտրությունը իրականացնում է ընկերությունը՝ կախված հաշվառման համակարգից և հաշվարկի մեթոդներից:

4.22 Այլ սպառողների համար սահմանվում է տաք ջրամատակարարման միադրույք սակագին, որը հավասար է տաք ջրամատակարարման հաշվարկային միջին սակագնին ($\bar{U}_{\text{ՏՁ}}$):

5. Սակագների ճշգրտումները

5.1 Վառելիքի գների փոփոխությունը, սղաճը և դրամի փոխարժեքի փոփոխությունները հաշվի առնելու համար տարին մեկ անգամ կատարվում է սակագների ճշգրտում հետևյալ բանաձևով՝

$$U_i = U_{i-1} \left[k_{\text{սղ}} \frac{U_{i-1}}{100} + k_{\text{փոխ}} \frac{\gamma_i \Phi_i}{\gamma_{i-1} \Phi_{i-1}} + (1 - k_{\text{սղ}} - k_{\text{փոխ}}) \right] + \Delta U_q,$$

որտեղ՝

U_i - ճշգրտված սակագինն է, որն ուժի մեջ է մտնում հաշվարկային (i) տարվա հունվարի մեկից,

U_{i-1} - ճշգրտման պահին գործող սակագինն է,

$k_{սղ}$ - սակագնի այն մասն է, որը ճշգրտման է ենթարկվում սղաճի (ինֆլյացիայի) տեմպով,

U_{i-1} - հաշվարկային տարվան նախորդող տարվա սեպտեմբեր ամսվա սղաճի ինդեքսն է դրան նախորդող տարվա նույն ամսվա նկատմամբ (համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրի),

$k_{ֆոնդ}$ - սակագնի այն մասն է, որը ճշգրտման է ենթակա դրամի փոխարժեքով (Հայաստանի Հանրապետության դրամ/ԱՄՆ դոլար),

$\Gamma\Phi_i$ - ճշգրտման պահին (նոյեմբեր) նախորդող ամսվա (հոկտեմբեր) դրամի միջին փոխարժեքն է (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակված տվյալներով),

$\Gamma\Phi_{i-1}$ - գործող սակագնի (U_{i-1}) հաշվարկում ընդունված փոխարժեքն է,

ΔU_q - բնական գազի սակագնի փոփոխությանը պայմանավորված սակագների ճշգրտման մեծությունն է:

5.2 Էլեկտրական էներգիայի և ջերմամատակարարման սակագների ճշգրտման համար սույն մեթոդիկայի 5.1 կետով սահմանված բանաձևում օգտագործվող $k_{սղ}$ և $k_{ֆոնդ}$ մեծությունները, սահմանվում են մեկ անգամ ընկերության կողմից՝ հաշվի առնելով ծախսերի կառուցվածքը և հետագայում փոփոխության ենթակա չեն:

5.3 Վառելիքի գնի (սակագնի) փոփոխությունով պայմանավորված սակագների ճշգրտումներն իրականացվում են հետևյալ բանաձևերով.

1) էլեկտրական էներգիայի համար՝

$$\Delta U_q = \frac{q \cdot U_i - q U_{i-1}}{1000 \cdot 9,31 \cdot h_{\text{ՅԷ}}},$$

որտեղ՝

$q U_i$ - հաշվարկային տարվա համար սահմանված բնական գազի սակագինն է (դրամ/հազ.նմ³),

$q U_{i-1}$ - ճշգրտման պահին գործող սակագնում ընդունված գազի սակագինն է (դրամ/հազ.նմ³),

9,31 - բնական գազի այրման ստորին ջերմությունն է (կՎտ·ժ/նմ³),

$\eta_{\text{ՅԷ}}$ - համակցված արտադրության տեղակայանքի բացարձակ էլեկտրական օգտակար գործողության գործակիցն է:

2) ջերմային էներգիայի համար՝

$$\Delta U_q = \frac{Q U_i - Q U_{i-1}}{1000} \times \frac{V_{qgl}}{Q_{gln} + Q_{sg}}$$

որտեղ՝ V_{qgl} - գազաթնային ջրատաքացուցիչ կաթսաներում օգտագործվող վառելիքի տարեկան քանակությունն է (մ^3 / տարի):

5.3 Բնական գազի սակագնի փոփոխության հետ կապված սակագների ճշգրտումը, անհրաժեշտության դեպքում, կարող է կատարվել կիսամյակային կտրվածքով:

5.4 Եթե Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագները սահմանվում են արտարժույթով, ապա սույն մեթոդիկայի 5.2 կետի 1-ին և 2-րդ ենթակետերում հաշվարկված (ΔU_q) մեծությունները բազմապատկվում են դրամի ԴՓ փոխարժեքով: